





### ՅՈՅՆԵՐԸ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԵՐՈՎ ԼՇԵՑԻՆ 1974Ի ԹՐՔԱԿԱՆ ԼԵՐԽՈՒԺՈՒՄԸ

ՆԻԿՈՍԻԱ, 15 (ՌՈՅԹԸՐԶ).- Յոյն կիպրացիք Չորեքշաբթի օր 5 վայրկեան դադրեցուցին իրենց աշխատանքները, մինչև ահապանգներ կը հնչէին իբրև բողոք հիւսիսային կիպրոսի մէջ 17 տարի առաջ թուրք կիպրական անջատողական պետութեան մը հռչակման դէմ:

### ԱՊԱՅՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐԸ ԶԵՆՔԻ ՄԵԾ ՊԱՅՄԱՆՈՑ ՍԸ ԿԸ ՅԱՅՏՆԱԲԵՐԵՆ

ՏԻԱՐՊԵՔԻՐ, 15 (ՌՈՅԹԸՐԶ).- Հարաւարեւելեան Թուրքիոյ մէջ ապահովութեան ուժերը պէնքերու մեծ պահեստ մը գրաւած են իսլամական ըմբոստներու պատկանող գաղտնի վայրէ մը, որ ականուած էր, յայտնեցին տեղական իշխանութիւնները Չորեքշաբթի օր:

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՅՈՅՍՈՎ

### ԹՈՒՐԹԻԱ ԿՐՆԱՅ ՔՐՏԵՐԵՆ ՍՓՌՈՒՄՆԵՐՈՒ ՍԿՍԻԼ

ԱՆԳԱՐԱ, 15 (ՌՈՅԹԸՐԶ).- Թուրքիա կրնայ մէկ ամիսէն քրտերէն սփռումներու սկսիլ, եթէ կառավարութիւնը բաղկացնող կուսակցութիւնները այս հարցին շուրջ համաձայնին՝ Եւրոպական Միութեան անդամակցութեան համար անհրաժեշտ չափանիշներուն հասնելու նպատակով ի գործ դրուող ճիգերուն ծիրէն ներս, ըսած է մարդկային իրաւանց մարպիւն պատասխանատու նախարարը, Չորեքշաբթի օր:

Ռուսոն Բապիւմ Եուլիէնի արտայայտութիւնները տեղի կ'ունենային այն պահուն, երբ կառավարական ընկերակցութեան անդամները կը քննարկէին քրտերէն սփռումներու հարցը: Ըստ վարչապետ Պիլիքի Էճիւրի, այդ հարցը «ուշ կամ կանուխ» նկատուի պէտք է առնուի: Էճիւրի տեսակէտին կը ձայնակցի կառավարական ընկերակցութեան պահպանողական անդամ Մետուք Ելլիմպ, սակայն անոր ուժգին կ'ընդդիմանայ ազգայնական ղեկավար եւ փոխվարչապետ Տեւիթ Պահչեյի, ինչ որ կրնայ երկփեղկուն յառաջացնել կառավարութեան շարքերուն միջեւ:

Կառավարութեան ազգայնական թելը ունի այն մտավախութիւնը, թէ նման վիճումներ կրնան քրտական անջատողականութեան թափ տալ: Եուլիէն ըսած է, թէ նման որոշում մը պէտք է տրուի կառավարութեան կողմէ: «Կրնանք քրտերէն սփռումներու ձեռնարկել, մեր քաղաքացիներուն իրականութիւնը ըսելու համար: Ծար-ը՝ էջ 10»

Հովանաւորութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆՆԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Նախագահութեամբ՝ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՎՐԵԺ ԵՒ ՍԵԼՍԱ ՍԱՊՈՒՆՃԵԱՆՆԵՐՈՒ ԸԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԵՍ Կազմակերպութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ. ԾՐՋԱՆԱՅԻՆ ԱԹԼԵԹԻ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻ Մասնակցութեամբ՝ ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆԻ Եւ իր նուագախումբին «ԱԼ ՀԱՄՊՐԱ» ճաշարան, Պէյթ Գօգօ, Էլիսար, Երեքշաբթի, 21 Նոյեմբեր 2000, Երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ: Տոմսերը կարելի է ստանալ յանձնախումբի եղբայրներէն: (ՌՈՅԹԸՐԶ)

## ՊՐՈՒՆԱՅԻ ՄԵՋ ՍԿՍԱԻ ԽԱՂԱՂԱԿԱՆԸ ԵԶԵՐՈՂ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՎԵՐԱԺՈՂՈՎԸ ՓՈՒԹԻՆ - ՔԼԻՆԹԸՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Խաղաղականը եպերող 21 երկիրներու ղեկավարները երէկ Պրունայի մէջ բացումը կատարեցին իրենց տարեկան վեհաժողովին, խոստանալով շուկաները բանալ եւ շրջանը աւելի ապահով դարձնել:

Մօտաւորապէս 24 ժամ տեւողութեամբ վեհաժողովին օրակարգի գլխաւոր նիւթերը առեւտրի առջեւ ցցուող պատնէշները մեղմացնելու միջոցներուն, ներդրումներուն եւ ինթրինէթի ձեւերով «նոր տնտեսութեան» շահերը բաժնեկցելու կապուած հարցերն էին:

Պաշտպանութեան եւ ապահովութեան առնչուող հարցեր մինչ այդ շուրջ տակ ձգեցին առեւտրին ու տնտեսութիւնը ղեկավարներուն միջեւ կայացած շարք մը երկկողմանի ժողովներու մէջ:


Մ. Նահանգներու նախագահ Պիլ Բիլինքըն տեսակցութիւն մը ունեցաւ իր ռուս պաշտօնակիցին՝ Վլադիմիր Փուիլինի հետ, որուն հետ քննարկած է պէնքերը հակակշիռի տակ պահելու միջոցները եւ շրջանը աւելի ապահով ու կայուն դարձնելու փորձերը: Ամերիկացի ղեկավարը գործարարներու ըսած է, թէ Ասիան Մ. Նահանգներու համար աւելի եւս կարեւոր դարձած է Պաղ Պատերազմէն ետք եւ թէ անոնք յանձնառու կը մնան «աշխարհի կենսական այս շրջանին»:

«Մեր ուժերը հոս կը մնան իբրև կայունութեան ուժ: Մեր դաշնակցութիւնը վերանորոգած ենք ձափոնի հետ: Աշխատած ենք, պահպանել Թայուանի շրջանին եւ Քորէական թերակղզիին վրայ խաղաղութիւնը», շեշտած է ան:

Փուիլինի հետ իր տե-

### ՎԵՐՋԻՆ ԶՐԱԺԵՇՏ ԼԷԱ ՌԱՊԻՆԻ

Հազարաւոր իսրայէլացիներ երէկ մասնակցեցան Նախկին վարչապետ Իցնաք Ռապիին կողմէ՝ Լէալի յուզարկաւորութեան, որուն ներկայ եղան նաեւ օտար բարձրաստիճան պաշտօնատարներ, որոնց կարգին էր Միացեալ Նահանգներու առաջին տիկինը՝ Հիլարի Բլիթը: Լէա Ռապիին մահացած էր Կիրակի օր, քաղցկեղի դէմ երկար պայքար մը մղելէ ետք: Հազարաւոր իսրայէլացիներ երէկ յարգանքի տուրքը մատուցեցին Լէա Ռապիին, որուն դաղալը գետնեղուած էր Թէլ Աւիւի այն հրապարակին վրայ, ուր ահաբեկուած էր Իցնաք Ռապիին: Ապա՝ Լէա Ռապիինի մարմինը փոխադրուեցաւ Երուսաղէմ, թաղուելու համար ամուսնոյն մօտ: Շիրիմին վրայ դամբանակար իսրայէլացի արտասանեցին Պարաք, նախկին վարչապետ Շիմոն Փերէս եւ Հիլարի Բլիթը: (ՌՈՅԹԸՐԶ)



Փուիլին եւ Բլիլքըն

սակցութեան ընթացքին, Բլիլքըն կոչ ուղղած է անոր, որ ապատակաւորութեան անհրաժեշտ օրինակները իր իրերէն մտնուած է:

Այս տարի չորրորդ եւ թերեւս վերջին անգամ ըլլալով տեսակցութեան մը ընթացքին, երկու կողմերը նաեւ քննարկած են Ռուսիոյ կողմէ Իրանի պէնքերու արտածումը եւ ռուսական տնտեսութիւնը, ինչպէս նաեւ շրջանային տարկէտեր՝ Միջին Արեւելք եւ Քորէական թերակղզի:

### ՅԱԲԵԼԵԱԼ ԲԱՐԵՎԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ՆՈՍՏՈՒՄ

Փուիլին գործարարներու եւ պաշտօնատարներու առջեւ խօսք առնելով խոստացած է

### ԿԻՊՐՈՍ ԿԸ ԶԵՐԲԱԿԱԼԷ ԱՊՕՐԻՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

ՆԻԿՈՍԻԱ, 15 (ՌՈՅԹԸՐԶ).- Կիպրոսի իշխանութիւնները ձեռնարկած են 38 քիւրտեր, սուրիացիներ եւ իրաքցիներ, որոնք ապօրինի կերպով կղզին մտած էին Երեքշաբթի գիշեր, յայտնեց ոստիկանութիւնը: Ոստիկանութիւնը աւելցուց, որ զաղթականներուն կարգին են 13 մանուկներ: Ուժեղ Կիպրոսի հարաւային շրջանը հասած էր ձկնորսական նաւով մը: Ոստիկանութիւնը չըսաւ, թէ նաեւ ուրիշ՝ ճամբայ ելած է: Կիպրոսէն դէպի Իտալիա եւ այլ երկիրներ անցնելու յոյսով յաճախ այսպիսի խուճրէր կը հասնին կղզին: Կիպրոս կ'ըսէ, որ ապօրինի կերպով զաղթականներ փոխադրող նաւերը ընդհանրապէս Լիբանանէն կու գան եւ թէ անոնց ճամբորդները հարիւրաւոր տղարներ կը վճարեն նաւուն վրայ տեղ ապահովելու համար:

### ՔՈՒԷՅԹ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ԱՐԵԻՄՏԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Քուէթը քննադատեց քարիւղ գնող արեւմտեան երկիրները՝ պահանջ ապահովելով քարիւղի սակերուն յաւելումին համար: Քարիւղի նախարար Յիլի Սէուտ Նասէր Սապահ ըսաւ, որ անարդարօրէն ՕՓԷՔ կը մեղադրուի սակերուն յաւելումին համար, մինչև սպառող երկիրները շահեր կ'ապահովէին քարիւղի վրայ հաստատուած տուրքերէն: Սապահ, որ կը խօսէր քարիւղի եւ կապի տարեկան խորհրդածողովին, դիտել տուաւ, որ արեւմտեան երկիրները պէտք է վերատեսութեան ենթարկեն բարձր տուրքերու քաղաքականութիւնը քարիւղին վրայ: Սապահ աւելցուց, որ այդ պետութիւններէն ոմանք արտադրող երկիրներուն շահին եռապատկեր ապահոված են քարիւղին վրայ հաստատուած բարձր տուրքերուն պատճառով: Սապահ պաշտպանեց ՕՓԷՔը, շեշտելով, որ անիկա իր կարելին քրա քարիւղի միջապային շուկաներուն կայունութիւնը վերահաստատելու համար: Այս տարուան ընթացքին, ՕՓԷՔ չորս անգամ բարձրացուց քարիւղի արտադրութեան քանակը, օժանդակելու համար սակերը կայուն պահելու ձգտելուն: Սապահ ընդգծեց, որ ՕՓԷՔ իր բաժինը կատարած է եւ անկէ աւելի ընելիք չունի: (ՌՈՅԹԸՐԶ)

### ԵԳԻՊՏՈՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԳԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ՄԵԾԱԳՈՅՆ ՅԱՂԹԱԿԱՆԸ

ԳԱՀԻՐԷ, 15 (ՌՈՅԹԸՐԶ).- Եգիպտոսի իշխող Ազգային Ժողովրդավար Կուսակցութիւնը ջանքախիչ յաղթանակ մը ապահոված է երեսփոխանական ընտրութիւններուն, որոնք երեք հանգրուաններով կայացած էին: Ներքին գործոց նախարար Հասիպ Ատի Չորեքշաբթի օր հրապարակեց արդիւնքները, որոնց յոյսին տակ Ա. Ժ. Կուսակցութիւնը 388 աթոռ ապահոված է խորհրդարանի 454 աթոռներէն, մօտաւորապէս 85 առ հարիւրը: Նախորդ խորհրդարանին մէջ նախագահ Հուսնի Մուպարաբի ղեկավարած կուսակցութիւնը ունէր 388 աթոռներուն 94 առ հարիւրը: Այս արդիւնքը կը նշանակէ, թէ ընդդիմադիրները յաւելեալ աթոռներ ապահոված են, սակայն Ա. Ժ. Կուսակցութիւնը կը պահպանէ երկու երրորդի մեծամասնութիւնը:

Մուպարաբ գոհունակութիւն յայտնեց ընտրութիւններուն արդիւնքներուն համար: Ան ըսաւ, որ ընտրական ամբողջ գործընթացը լաւ էր եւ կը յուսայ, որ ապագային աւելի լաւ պիտի ըլլայ:

Մեկնաբաններն այ դիտել կու տան, որ այս տարուան ընտրութիւնները քաղաքական անկունադարձ մը կը ներկայացնեն, որովհետեւ վեղծարարութիւնը նուազագոյնի իջած է, առիթ տալով ընդդիմադիրներուն անակնկալ հարւածներ տալու իշխող կուսակցութեան, որ այս անգամ նոյն համեմատութեամբ չէ, որ արձանագրած է յաղթանակը: Եգիպտոսի իշխանութիւնները դատաւորներու հսկողութեան վստահած էին քուէարկութիւնը՝ կանխարգիլելու համար օրինապահութիւններն ու վեղծարարութիւնը: Դատաւորներուն ոչ բաւարար թիւին պատճառով է, որ ընտրութիւնները տեղի ունեցան երեք հանգրուանով:

Ընտրութիւններուն նախօրեակին եւ անոնց ընթացքին խռովութիւններ արձանագրուած են, տասը պոէ աւելի քան օտրանատուն վիրաւորներ պատճառելով: 1995ի ընտրութիւններուն աւելի մեծ թիւով պոէեր ու վիրաւորներ ինկած էին:

Նոր խորհրդարանին մէջ անկախ թեկնածուները շահած են 37 աթոռ: Ասոնց կարգին են 17 իսլամականներ: Ընդդիմադիրներն այ 17 աթոռ ապահոված են: 454 երեսփոխաններուն 444ը կ'ընտրուի, մինչև մնացեալ տասն կը նշանակուի նախագահին կողմէ:

### ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԵՋ ԹՈՒՐԹ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐ ՍԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅԱՒ

Թուրք իսլամական ղեկավար մը, որ գերմանական լրատու աղբիւրներու կողմէ «Բեյլիքի իսլամիստ» կոչուած է, երէկ գերմանական ատենակի մը կողմէ բանտարկութեան դատապարտուած է, իր հետեւորդները իրահրած ըլլալու յանցանքով: Ծար-ը՝ էջ 10

### ԵՒՐՈՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԸ ԿԱՐՕՏԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԼԻՌԱՒ ԱՆԴԱՍ ԴԱՌՆԱԼՈՒ ԶԱՍԱՐ

Կ'ԸՍԵՒ ԲՈՇԹՈՒՆԻՅԱ



Քոչըռուցից Եւրոխորհրդարանին մէջ խօսքի պահուն:

ՄԹՐԱԶՊՈՒՐԿ, 15 (ՌՈՅԹԸՐԶ).- Եւրոպայի նախագահ Վոլֆյալ Բոշթոնիցա Չորեքշաբթի օր յայտնած է, թէ Եւրոպայի կ'ուզէ անդամակցել Եւրոպական Միութեան, սակայն անիկա յաւելեալ օժանդակութեան կարիք ունի նաեւ իր տնտեսութիւնը վերականգնելու համար: Քոչըռուցից կը խօսէր Եւրոխորհրդարանին մէջ: «Շատ յստակ է, թէ մեր երկիրը ժամանակի կը կարողանայ Միութեան լիիրաւ մէկ անդամը դառնալու համար», ըսած է ան 626 անդամ հաշուող խորհրդարանին մէջ: Քոչըռուցից Եւրոպայի օժանդակութեան կողմ ուղղած է ապահովելու զաղթականներու Քոսովո վերադարձը եւ դարձանելու ՕԹԱՆԻ կողմէ Եւրոպայի ուժերակոծումներուն պատճառով արձանագրուած կենսապայմանները:


# ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԸ ՊՂԾԵՑԻՆ ՐԱՖՖԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

«Ասկազ փրկւ» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, թէ անյայտ անձինք 10 Նոյեմբերին Թիֆլիսի հանրային գործիչներու «Նոյնիվանք» պանթէոնին մէջ պղծեցին 19րդ դարու հայ նշանաւոր վարպետը եւ պատմագիր Րաֆֆիի (Յակոբ Մելիք Յակոբեան) գերեզմանը: Բարբարոսները կողպտեցին գերեզմանը՝ գողնալով մահաբանին գունաւոր մետաղներէ պատրաստուած նախշերը: 14 Նոյեմբերին վրաստանի խորհրդարանի նախագահ Ջուրայի Ժալալի անունով գերեզմանատուն: Անոր կ'ուղեկցէին Թիֆլիսի քաղաքապետ Ի. Ջուրայեան, «Վրաստանի Քաղաքացիներու Միութեան» գլխաւոր քարտուղար Է. Սուրմուռնիձէ, վրաստանի խորհրդարանի անդամներ, Թիֆլիսի ոստիկանութեան պետ Ի. Ալազիձէ, հայ համայնքի ղեկա-

վար Կենտրոնի Մուրատեան, վրաստանի մէջ Հայաստանի դեսպան Գէորգէ Ուսուրու: Վրաստանի խորհրդարանի նախագահը վրաստանի ղեկավարութեան անունով կատարուածը համարեց բարբարոսութիւն, որուն դէմ պէտք է պայքարել: Ան նաեւ համոզմունք յայտնեց, որ այս միջադէպը չհաջողի հայ եւ վրացի ժողովուրդներու բարեկամական եւ բարի դրացիական յարաբերութիւններուն վրայ: Թիֆլիսի քաղաքապետը յայտարարեց, թէ ոստիկանութեան հրահանգ տրուած է մէջնէն կարճ ժամանակին ընթացքին յայտնաբերել մեղաւորները: Նախնական տուեալներու համաձայն, տուեալ արարքը չէ կատարուած ազգամիջեան հողի վրայ:

# Հ. Յ. Դ. «ՔՐԻՍՏԱՓՈՐ» ԿՈՄԻՏԵՆԻԹԵԱՆ 75ԱՄԵԱԿ ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՔԱՆԴԱԿԻ ԲԱՅՈՒՄ

Կիրակի, 12 Նոյեմբերի կէսօրէ ետք ժամը 6:00ին, Հ. Յ. Դ. Նաչնակցութեան «Քրիստափոր» կոմիտէութեան կազմակերպութեամբ Համազգայինի Նշան Փալանճեան Ճեմարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. Նաչնակցութեան հիմնադրներէն Քրիստափոր Միքայէլեանի քանդակին բացումը: Հանդիսութեան ներկայ էին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Ուաչերեան, երեսփոխան եւ երիտասարդութեան ու մարմնակրթութեան հարցերու նախարար Սեպուհ Յովնանեան, ազգային պատկան մարմիններու ներկայացուցիչներ եւ շուրջ երկու հարիւր ներկաներ: Հանդիսութեան սկսաւ «Մշակ բանուոր» քայլերգի ունկնդրութեամբ: Ապա Հ. Յ. Դ. «Քրիստափոր» կոմիտէութեան կողմէ խօսք առաւ Արիւ Տէր Սարգիսեան, որ շնորհակալութիւն յայտնեց քանդակագործ Ալիք Քոչարեանի եւ քանդակի գեետեղման հովանաւոր Րաֆֆի կէօօղոյանեանի: Ան հրաւիրեց 1923ին Հ. Յ. Դ.



Ներսէ Տէր Յովնանեան կը բարձրացնէ քանդակը ծածկող դրօշակը:

# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Նախապէս հաղորդած էինք, որ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի նախաձեռնութեամբ Շաքաթ, 11 Նոյեմբերին, կազմակերպուած էր սփիւռքահայ գործարարներու եւ բարերարներու հանդիպումը: Վերոյիշեալ հանդիպման ընթացքին, այլ պաշտօնատարներու կողքին, խօսք առաւ նաեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրէն Վահան Տէր Ղեւոնդեան, որ ներկայացուց անցեալ տարու ընդմիջեալ հիմնադրամին կողմէ կատարուած աշխատանքները: Ան ըսաւ, թէ 1999ի թելեթոնի հաւաքուած 5 միլիոն տոլարը ուղղուած է Լեւոնայի Ղարաբաղի շրջանները իրարու կապող «Հիւսիս - Հարաւ» մայրուղիի շինարարութեան, մայրուղիին երկարութիւնը 170 քիլոմէթր է, իսկ ընդհանուր արժէքը 25 միլիոն տոլար: Վահան Տէր Ղեւոնդեան հանդիպման ներկաներուն կողմէ ուղղեց աշխատանքները մասնակցիլ հիմնադրամի կաշխատանքներուն: Այս կողմէն միացաւ նաեւ Հայաստանի նախագահը: Իր կարգին, «Արմէնփրէս» լրատու գործակալութիւնը փորձած է «Հայաստան - Սփիւռք» խորհրդատուի գրասենեակի պատասխանատու Վահէ Աղաբէկեանին պարզել, թէ որքան սփիւռքահայ գործարար ներկայիս վերադարձած է Հայաստան

եւ ինչ ծաւալի ներդրումներ կը կատարեն անոնք: Վ. Աղաբէկեան նշեց, որ ներկայիս կը ստեղծուի տարալեզու մ.թ. որ պիտի ներառէ սփիւռքահայ գործարարները, որոնք վերադարձած են Հայաստան անցեալ 10 տարիներու ընթացքին: Ըստ Վ. Աղաբէկեանի, ներդրումներու ծաւալներուն մասին տուեալներ ներկայացնելը բաւական դժուար է, որովհետեւ առանձին ներդրողներու գումարները կը կազմեն քանի մը հազարէն մինչեւ քանի մը միլիոն տոլար: Ինչ կը վերաբերի «Հայաստան - Սփիւռք» երկրորդ խորհրդատուին, Վ. Աղաբէկեան ըսաւ, թէ նախապատրաստական աշխատանքներ արդէն իսկ կը տարւին, իսկ մէկ - երկու շաբաթէն նստակները պիտի սկսին ուղարկուիլ Սփիւռք. այնպէս որ, 2001ին պիտի կայանայ երկրորդ խորհրդատուի ժողովը, որ նախորդին համեմատութեամբ ակտիւ գործնական պիտի ըլլայ: Ան անցնուց, որ վերջերս Հայաստանի կառավարութեան որոշումով ստեղծուեցաւ Սփիւռքի խորհուրդը, որ ձեռնարկուի պիտի ըլլայ առաջին խորհրդատուի որոշումներուն իրականացման երիտասարդական ճամբարի ստեղծում, համահայկական պատկերասփիւռի կայանի հիմնադրութիւնն է այլ: Այս նպատակով բաւական մեծ աշխատանք կատարուած է, որուն մասին պիտի զեկուցուի յառաջիկայ ժողովին ընթացքին:




Արքի Տէր Սարգիսեան կը փոխանցէ կոմիտէութեան խօսքը:

(Լուսանկարները՝ Պ. ՉԱՐՈՒԿԵԱՆԻ)



Մկրտիչ Սկրտիչեան խօսքի պահուն:



Քրիստափոր Միքայէլեանի քանդակը:

Պէյրուսի «Բարզէն Միւնի» Պատանեկան Միութեան անդամներէն եւ Հ. Յ. Դ. «Քրիստափոր» կոմիտէութեան առաջին սերունդի անդամներէն Ներսէ Տէր Յովնանեանը կատարելու քանդակին բացումը: Ներկաներուն կողմէ երգուած «Մեկը ակնկէզ գիւնուր կնք» երգին ընկերակցութեամբ, Ն. Տէր Յովնանեանեան կատարեց քանդակին բացումը: Ապա ներկաները բարձրացան Համազգայինի «Վասպուրական» սրահ, ուր տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. «Քրիստափոր» կոմիտէութեան հիմնադրութեան 75ամեակին նուիրուած ձեռնարկ մը: Ձեռնարկին ընթացքին «Քրիստափոր» կոմիտէութեան կողմէ արտասանած իր խօսքին մէջ Արիւ Տէր Սարգիսեան հակիրճ կերպով ներկայացուց կոմիտէութեան պատմականը եւ արժեւորեց զայն: Ան ըսաւ. «Տարիներ շարունակ «Քրիստափոր» կոմիտէութիւնը, հաւատարիմ մնալով Քրիստափոր Միքայէլեանի եւ Դաւնակցութեան հիմնադր ընկերներու գաղափարախօսութեան, նուիրուեցաւ հայ ժողո-

# ԵՐԿՐԱՆՔԻ ՎՏԱՆԳԻ ՆՈՒԱԶԵՅՈՒՄԸ՝ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Հայաստանի, վրաստանի, Արցախի, Ռուսիայի (Տաղստան եւ Հիւսիսային Օսեթիա - Ալանիա) եւ Յունաստանի երկրաշարժի մասնագէտները, որոնք 10էն 12 Նոյեմբեր Երեւանի մէջ կը մասնակցէին «Կովկասի մէջ երկրաշարժի վտանգի կառավարման եւ արհեստի երկրաշարժներու պարագային փոխօգնութեան միջպետական համակարգի մշակման» թեմա յով սեմինարին, որուն շուրջ ընդունեցին, ըստ որուն, երկրաշարժի վտանգի նուազեցումը կովկասեան շրջանին մէջ պէտք է հանդիսանայ ազգային քաղաքականութիւններու առաջնահերթ խնդիրը: Սեմինարի աւարտին մասնագէտները ստորագրեցին փաստաթուղթ մը, որով անոնք իրենց երկիրներուն նախագահներուն դիմեցին՝ կարեւոր նկատելով երկրաշարժի վտանգի նուազեցման ուղղութեամբ տարուող աշխատանքները: Հայաստանի երկրաշարժի պաշտպանութեան ազգային ծառայութեան պետ փրոֆ. Սերգէյ Բալասեան ըսաւ, թէ Կովկասի մէջ երկրաշարժի վտանգի մակարդակը բարձր է, իսկ շրջանի երկիրներուն միջպետական համագործակցութիւնը արդիւնաւէտ է զարմնեկու նպատակով կարեւոր են այդ վտանգի նուազեցման իրաւական հիմքը ապահովող փաստաթուղթերու մշակումը եւ օրէնսդրութեան ընդունումը: Ըստ Ս. Բալասեանի, մասնաւորապէս անհրաժեշտ է գաղափարներ երկրաշարժի վտանգի պետական ղեկավարման ցանցը, նպատակամտ զարմնեկութեան եւ պետական մարմիններուն հետ տարուող աշխատանքը, ինչպէս նաեւ՝ արագ միջամտութեան փրկարար ջոկատներու գործունէութիւնը:

# ՐԱՅԱՍՏԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԵՄԻՆ

13 Նոյեմբերին Հայաստանի Ազգային Ժողովի ընկերակցութեամբ անցնուած միջազգային կազմակերպութեամբ տեղի ունեցաւ ձեռնարկութեան օգնութեան բարեխառն հարցերուն նուիրուած խորհրդաժողով մը, որուն հրաւիրուած էին առողջապահութեան մարզի պատասխանատուներ, հիւանդանոցներու գլխաւոր բժիշկներ, մասնագէտներ եւ լրատուամիջոցներու ներկայացուցիչներ: Խորհրդաժողովին ընթացքին նշուեցաւ, որ Ազգային Ժողովը կը նախապատրաստէ օրինագիծ մը, որ պիտի ներառէ բժշկական օգնութեան կազմակերպման հետազոյ մօտեցումները: Մնայուն յանձնախումբի նախագահ Գագիկ Թալուեան, նախարար Արարատ Մկրտչեան եւ միւս ելուցիչները նշեցին, որ հայրենի առողջապահութեան մարզը կ'ապրի ֆինանսական ծանր ճգնաժամ մը, այն կարծիքը յայտնեցին, որ առողջապահական համակարգի ապագան կապուած է անոր ապապետականացման, վճարովի բժշկական սպասարկման հետ: Մտքեր փոխանակուեցան նաեւ ապահովագրական առողջապահութեան հայեցակարգի ներդրման, բժշկական հիմնարկները շահութեահարկէ ազատ կացուցելու, առողջապահութեան նախարարութեան պատկանող բժշկական կեդրոնները աղ նախարարութեան ենթակայութեան հանելու եւ այլ հարցերու մասին:

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. ԿԱԹՈՂԻԿՈՍ . ՊԱՏՐԻԱՐԸՆ ԸՈՒՄԻ ԼԵՒՈՆԵԱՆ ԴՊՐԵՎԱՆԵՆ ՄԵՋ ԸՆԴՈՒՆԵՅ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ԸԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ամենապատիւ Ներսէս Պետրոս ԺԹ. կաթողիկոս պատրիարքը Պէյրուս վերադարձաւ Կիրակի, 12 Նոյեմբերին: Ան կը գտնուէր Հռոմ՝ մասնակցելու համար Ս. Գրիգոր Լուսաւորիչի մատուցած Յովհաննէս Պողոս Բ. սրբազան քահանայապետի կողմէ Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին յանձնարար մեծաշուք արարողութեան, որ տեղի ունեցաւ Վատիկանի մէջ, Ուրբաթ, 10 Նոյեմբերին: Հիմա Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ անոր ընկերակցող բարձրաստիճան եկեղեցականները բազմաճամ պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէր նաեւ Հայաստանի կրօնքի հարցերու նախագահը: Հանդիպումին ներկայ էր նաեւ Հռոմի մէջ Հայաստանի դեսպանը, հայ եւ օտար կաթողիկէ բարձրաստիճան եկեղեցականներ, Ամարատ Զրուբեան հայ քոյրերու միաբանութեան անդամներ, ինչպէս նաեւ՝ Հռոմի մէջ հայ գաղութի ներկայացուցիչներ: Արդուն Ամենայն Հայոց կաթողիկոսը ամենապատիւ հոգեւոր տէրը գնահատեց հայ ժողովուրդին հոգեւոր առաջնորդներուն այն բոլոր քայլերն ու նախաձեռնութիւնները, որոնք կը նպաստէին Աւետարանի սուրբ պատգամներով:



Գարեգին Բ. կաթողիկոս կը դիմաւորուի հացով եւ աղով:



տեն միասնակամութեամբ ու համերաշխ գործակցութեամբ, միասնակամութիւնը, որ մեր գոյատեւման ու փրկութեան հիմնական պայմանն է: Ան շեշտեց միաժամանակ միասնակամ ճիգերով աղանդաւորական հոսանքներու գործած ակտիւ դէմ պայքարելու անհրաժեշտութիւնը՝ մղելով մեր ժողովուրդին գաւազնաբեր հասարակ մեղալու իրենց հոգեւոր ու ազգային արմատներուն, գիւնուելու հոգեւոր գիտութեամբ եւ իր հաւատքին գիտակից՝

ապրելու Աւետարանի սուրբ պատգամներով: Ողջունել էր տեղ սրբազան քահանայապետին Հայաստան այցելութեան ծրագիրը, Ներսէս Պետրոս ԺԹ. կաթողիկոս - պատրիարքը ըսաւ. «Այս բացառիկ առիթով, վերահաս տէր, ուրախ ենք մեր սիրեցեալ հայ ժողովուրդին ուշադրութիւնը հրակիւնելու այն իրողութեան վրայ, որ Հայ Կաթողիկէ եկեղեցու պատմական գոյութիւնը եւ անոր ներկայութիւնը Ընդհանրական Կաթողիկէ եկեղեցին ներս ուժակամութեան արդիւր է Հայ Առաքելական եւ Կաթողիկէ եկեղեցիներու մօտեցման կամքին, ինչպէս նաեւ Առաքելական եւ Կաթողիկէ Հայոց եկեղեցիներու եղբայրական եւ կատարելապէս գործակցութեան գործընթացը: Մայր Հայոցնիքի մէջ եւ սփիւռքահայութեան մօտ: Իր կարգին խօսք առնելով, Ամենայն Հայոց հայրապետը անհուն գոհունակութիւն յայտնեց հայկական այս օճախի մէջ գտնուելուն համար եւ ընդգծեց միասնակամութեան միութեանակամ աշխատանքներուն կարեւորութիւնը: Ամենապատիւ հոգեւոր տէրը Գարեգին Բ. ին ճշտեց իր պատմական այցելութիւնը յիշատակող մակագրուած գեղակերտ սկիւր: Հռոմէն Պէյրուս վերադարձին յաջորդ օրը, ամենապատիւ հոգեւոր տէրը մասնակցեցաւ Լիթանի կաթողիկէ պատրիարքներուն եւ եպիսկոպոսներուն տարեկան ժողովին, որ կը գումարուի Պետրոսի մէջ, Երկուշաբթի, 13 Նոյեմբերէն մինչեւ Շաբաթ, եւ պիտի եզրափակուի պաշտօնական յայտարարութեամբ մը: ԳԻՒԱՆ ԸԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԸՆԻԹԵԱՆ 14 ՆՈՒՄԵՄԵՐ 2000

**ՃԱՇԿԵՐՈՅԹ**  
Կազմակերպութեամբ՝  
**Հ. Ս. Ը. Մ. Ի**  
ԵՐԶԱՆԱՅԻՆ ՍԿԱՌՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՌՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 25 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ, «Լը Տոմ» ձաշարանին մէջ, Աժալթուրի ձամբուն վրայ:  
● Տոմերը ապահովել Գրատուն Նարեկացիէն:  
● Ճաշկերոյթին նպատակն է ճախկին եւ ներկայ Հ.Ս.Ը.Մ.Ի-ականներ համայնքել:



# Հիբանանեան Մամուլ

## ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՄԱԿ

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան կը սպասէ յստակ պատասխան մը՝ հիմնական հարցի մը շուրջ։ Լիբանան պատրաստ է լրիւ ստանձնելու Հարաւի ապահովութիւնը։

Լիբանանեան պատասխանը մինչեւ հիմա կը սահմանափակուի հետեւեալով։ Տանրագետութեան նախագահ Էմիլ Լահուատ իր ուղղութիւնները կու տայ արտաքին գործոց նախարարութեան, վերջինս լիբանանեան կեցւածքը կը փոխանցէ ՄԱԿի մօտ Լիբանանի պատուիրակութեան, իսկ իր անձնապաշտպան Մալիք Թատմուրի աշխատանքային խմբակի մը հետ կը շարժի ՄԱԿի պատկան մարմիններուն ուղղութեամբ, լիբանանեան սահմանները վրայ իրարայայակեան խախտումներուն մասնաճանաչութիւնները փոխանցելու համար։

Վերջինիս մարմիններէն ընտրուի գլխաւոր կենտրոնը կը մօտենան այս շարժման։ այն իմաստով, որ Իսրայէլ իր կարգի մը Լիբանանեան կողմին կատարած խախտումներուն մասին բողոքներ կը յղէ ՄԱԿին, եւ արդիւնքը կ'ըլլայ՝ պատասխան պատասխանի ղեկ, յուշակիրներու եւ բողոքագիրներու պատերազմ։

Սակայն ՄԱԿ լիբանանեան բողոքագիրներուն մէջ չի գտներ իր ընդհանուր քարտուղարին վերջին տեղեկագիրին համոզիչ պատասխանը, եւ այդուհետեւ տրամաբանութեան եւ գոյութիւն ունեցող երկխօսութեան մէջ սխալ մը կայ։

Իսկ ՄԱԿի արամարանութիւնը կը բնութագրուի հետեւեալով։

ՄԱԿ կը նկատէ, որ լիբանանեան բողոքները ճիշդ են եւ տեղին, սակայն կը մեկնին այն հիմնաւորումէն, որ «կապոյտ Գիծ» չի գոհացներ Լիբանանը, ո՛չ ալ Իսրայէլը, բայց Լիբանան որդեգրեց այդ գիծը, որպէսզի անկախ հանդիսանայ հիմք ու մեկնակէտը հետագային յանդիսանայ ճշմարտութեան համար թիւ 425 որոշումին մէջ։

Ընդհանուր գործադրութեան որոշում մը, որուն գործադրութիւնը տակաւին ոչ ամբողջական կը նկատէ Լիբանան։

Այս քայլերէն է այն, որ լիբանանեան պատուիրակութիւնը պաշտպանէ իրագործումը ձեռքբերումը եւ շարունակէ իր պատրաստութիւնը գեներալ-փոխնախագահ Էմիլ Լահուատի կողմէն։ Լիբանանեան կողմը կը ներշնչէ Ապահովութեան խորհուրդի անդամ երկիրներուն, որպէսզի անոնք ապահովեն անհրաժեշտ աջակցութիւնը «կապոյտ Գիծ» զօրացնելու համար, մինչեւ որ այդ գիծը համապատասխանէ 1923ի գիծին, համաձայն միջազգայնօրէն ճանչցուած սահմանագիծին։

Ան կը նկատէ, որ փոխադարձ բողոքագիրները են ինչ որ միմիւրիւրեւեակայինները կը փոխանցեն իրադրութեան մասին, կը նշեն որ «կապոյտ Գիծ» տակաւին ենթակայ է ոտնձգութեան եւ լիբանանեան պաշտօնական խօսքը՝ կացութեան կաշուի եւ ապահով ըլլալուն մասին, չեն փոխեր այս տեղեկագիրներուն բնոյթը ՄԱԿի սահմանային շրջաններուն մէջ տեղի ունեցող առօրեայ իրադարձութիւններու իրականութեան մասին։

Ան կը նկատէ, որ Մաքարէ Հըպատային Լիբանանի պատկանելութեան կառուած մնալը բաւարար չէ, բացի թէ ներկայացուի Սուրիոյ կառավարութեան կողմէ ստորագրուած ձեռագիր փաստաթուղթ մը՝ յստակօրէն գծուած քարտէսով մը։ Այն առեւ ՄԱԿի ընդհանուր քարտուղարութիւնը կը հրաւիրէ Ապահովութեան խորհուրդի արտաքին կարգ ժողով մը, որպէսզի վաւերացնէ այդ փաստաթուղթը եւ փոփոխութեան ենթարկէ միջազգային ուժերու գործելու բնոյթը, այնպէս մը, որ անոր իրաւասութիւնները տարածուին նաեւ լիբանանեան Մաքարէ Հըպատայի վրայ։ Այն ժամանակ իրողապէս այդ շրջանը կը ներառուի թիւ 425 որոշումի շրջագիծին մէջ։

Ան կը նկատէ, որ իսրայէլացի զինուորներուն հարցով Լիբանանի հետ անհասկացողութիւնը կու գայ գերեզմաններէն վայրի բնոյթին շուրջ գոյութիւն ունեցող անհասկացողութեան։ Լիբանանեան կողմը կը յայտնէ, որ անոնք գերի վերցուեցան լիբանանեան Մաքարէ Հըպատայի մէջ, մինչ ընդհանուր քարտուղարութիւնը տակաւին չէ համաձայնած անոնց լիբանանեան հող ըլլալուն շուրջ եւ նկատելի կու տայ, թէ ինչ որ տեղի ունեցաւ զինադադարի խախտում մըն էր լիբանանեան կողմէն։

Լիբանան այս տրամաբանութեան կը պատասխանէ հետեւեալ կերպով։

Թիւ 425 որոշումը յստակօրէն հետեւեալ կ'ըլլէ՝ «... ՄԱԿի ժամանակակից ուժերը պէտք է օգտին լիբանանեան կառավարութեան, որ իր ամբողջական գերիշխանութիւնը տարածէ Թուրքիոյ հետեւեալ շրջանին մէջ։

Ուրեմն, ինչո՞ւ այս ուժերը իրենց պարտականութիւնները ամբողջութեամբ չեն կատարեր որոշումին համաձայն։

Թիւ 425 որոշումը կ'ընկնէ Թուրքիոյ, որպէսզի զազրեցնէ իր զինուորական գործողութիւնները Լիբանանի դէմ եւ իր ուժերը անմիջապէս հեռացնէ լիբանանեան հողէն։ Ինչո՞ւ այս մէկը չգործադրուեցաւ, մասնաւորապէս ՄԱԿ կը համաձայնի Լիբանանի հետ կ'ըլլէ, թէ գոյութիւն ունին սահմանային կէտեր, որպէս տակաւին գրաւուած կը մնան Թուրքիոյ կողմէ... Մաքարէ Հըպատայի հողերէն գատ։

Թիւ 425 որոշումը յստակօրէն չի խօսիր լիբանանեան բանակը հարաւ ուղարկելու մասին, այլ՝ շրջանին մէջ պետութեան գերիշխանութեան հաստատման մասին, իսկ այս գերիշխանութիւնը պահպանուած է միացեալ պահպանական ուժերուն միջոցով, որոնք կը համագործակցին միմիւրիւրեւեակապէս։

Լիբանան նկատելի կու տայ, որ ՄԱԿի մօտ գոյութիւն ունին բաւարար փաստաթուղթեր, որոնք կը հաստատեն Մաքարէ Հըպատայի լիբանանեան պատկանելիութիւնը, իսկ այս հարցին շուրջ ծագած անհասկացողութեան հետեւանքները կը կրէ միջազգային կազմակերպութիւնը, որ կը մերժէ նկատի առնել այս փաստաթուղթերուն օրինականութիւնը։

Իսրայէլացի գերիներուն հարցը արդարացուած է, որովհետեւ գերեզմանները տեղի ունեցած է Թուրքիոյ կողմէ գրաւուած լիբանանեան տարածքի մը մէջ, եւ գործողութիւնը տեղի ունեցաւ իրեն հետեւանք լիբանանցի կառավարները իր բանտերուն մէջ պահելու իսրայէլեան որոշումին... եւ անոնց ազատ արձակման գծով ՄԱԿի թերացումին։

Այս բոլորին իրեն արդիւնք՝ Լիբանան եւ ՄԱԿ կ'ունենան կը մնան իրենց տեսակէտներուն եւ կեցւածքներուն, առանց որ մինչեւ հիմա մէկը կարենայ միւր համոզման, նկատի ունենալով մասնաւորապէս, որ երկու կողմերուն միջեւ փաստութիւնը կը պակասի, իսկ անհասկացողութիւնը կը խորանայ։ Ասոր համար ալ անհրաժեշտ է լուրջ եւ պատասխանատու երկխօսութիւն։

# ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԸՆԹԱՑՔԻՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՊԱՏԱԿԸ

Իսլամական համագումարին մասնակցած լիբանանեան պատուիրակութիւնը իսլամական երկիրներու դեկլարանտներուն հետ նախընտրեց կապ հաստատել քուրդներու ետին եւ զանոնք մղել աջակցելու՝ հարաւային Լիբանանի վերակառուցման աշխատանքին, այս հարցը համագումարի միտքերուն ընթացքին արժարժելու փոխարէն։

Սակայն մէկ կողմ դրած այն, ինչ որ տեղի ունեցաւ վերոյիշեալ հանդիպումներուն ընթացքին, պատուիրակութեան ատարած ճիշդ մտայնութիւնը կը կայանար Երուսաղէմի ինթիֆատային ամբողջական աջակցութիւնը կը լրացնէ լիբանանեան դիմադրութեան դերակատարութիւնը։ Պիմադրութիւն մը, որ Իսրայէլին ստիպեց Լիբանանի կարգ մը տարածքներէն մինչեւ Կապոյտ Գիծ հեռացնելու իր ուժերը։

Բնականաբար լիբանանեան պատուիրակութեան այս կեցուածքը քննարկման ծիրէն դուրս բերուի, իբրանահի դրամական կարգ մը պահանջները, այս ծիրին մէջ լիբանանեան պատուիրակութիւնը այս համագումարի ընթացքին ո՛չ մէկ բան պահանջեց, բացի դիմադրութեան աջակցութեան, մինչեւ ազգայնագրումը լիբանանեան հողերուն (որոնք տակաւին իսրայէլեան բռնագրաւման տակ կը գտնուին), իսրայէլեան բանտերուն մէջ գտնուող լիբանանցի գերիներու ազատ արձակումը եւ իսրայէլեան յարձակումներուն պատճառով Լիբանանի կրած վնասներու հատուցումները, առանց մշտնապէս վերակառուցման օժանդակելու գծով իսլամական երկիրներէն որեւէ պահանջ։

Լիբանանեան պատուիրակութեան այս վարուելակերպը համագումարին մասնակցողներուն գանահատանքին արժանացաւ, մկատի ունենալով, որ ան կը մեկնէր կողմերու այն ցանկութեան, որ համագումարին որոշումները սահմանափակուին քաղաքականապէս եւ միջազգային ինթիֆատային աջակցելու, պաղեստինցի ժողովուրդին դէմ իսրայէլեան ոտնձգութիւնները դատաւարաններու միջազգային պահանջները իսրայէլեան գործընթացին հետ կապուած հարցերուն վրայ չկեղծուեցան։ Բարձր, որոնք այդքան հրատապ բնոյթ չեն կրեր, որքան Երուսաղէմի ինթիֆատան։

Այս դիտարկումէն ալ կարելի է հասկնալ այս մէկը, ինչպէս որ լիբանանեան պատուիրակութեան համագումարին մասնակցող երկիրներու պատուիրակութեանց հետ ունեցած հանդիպումները ցոյց կու տային լիբանանցիներուն բազմակողմանի գոհողութիւնները իսրայէլեան բռնագրաւումին դէմ դնելու մէջ։ Լիբանանցիները համագումարին որոշումներէն դժգոհ չէին, հակառակ անոր որ անոնք չընդգրկեցին իսրայէլեան բռնագրաւումէն յառաջացած աներին վերակառուցման մասին կէտ մը։

Հակառակ ասոր, լիբանանեան պատուիրակութեան աղբիւրները կը նախատեսեն, որ այս որոշումները որեւէ ծխախոտ անդրադարձ չունենան ո՛չ լիբանանեան, ո՛չ ալ պաղեստինեան մակարդակներուն վրայ, որովհետեւ այս համագումարին որոշումները կը վերաբերէին պաղեստինցիներուն, իսկ Լիբանանի տրամադրութիւնը իսլամական երկիրներուն օժանդակութիւնը պիտի որոշուի հետագային։

Ասկա պատճառ դարձաւ, որ Քաթարի մէջ տեղի ունեցած համագումարին ընդհանուր պատկերը այն տպավորութիւնը ձգէ, որ իսլամական երկիրները առաջնահերթութիւն տան մերկայ փուլի դասերը ընդունելու եւ աշխատին օժանդակութիւն տրամադրելու դիմադրութեան ուժերուն, ըլլան անոնք պաղեստինեան իշխանութիւններու շրջաններուն թէ Լիբանանի մէջ։

Իրեն քաղաքական վերջին եզրակացութիւն՝ կը թուի, թէ լիբանանեան կեցուածքը մկատի առած է միջազգային հանրային կարծիքը, որ շրջանի խաղաղութեան գործընթացին հետ կապ ունեցող երկիրները վերջնականապէս կողմնորոշուին խաղաղութեան ուղղութեամբ՝ իրեն ուղղակիապէս ընտրուած։ Անհիկա մկատի առած է նաեւ մերթիւրի իրադրութիւնը՝ դիմադրութեան եւ Սուրիոյ Լիբանանի աջակցելու իրողութիւնը մշտնապէս ընդմեջէն, այն համոզումով, որ չկայ տարած իսրայէլեան բռնագրաւման տակ գրաւուող հողերու ազատագրումը պահանջելու գծով։

ժՈՐԺ ՍԱԼԻՍԱ

«Անուար»

**Ը. Յ. Դ. «Է. ԱՎՆՈՒՆԻ» ԿՈՄԻՏԵՈՒԹԻՆ**

**ՃԱՇԿԵՐՈՅԹ — ՊԱՐԱՇԱՆԴԵՍ**

Կազմակերպութեամբ՝

**«Է. ԱՎՆՈՒՆԻ» ԿՈՄԻՏԵՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ**

Կերպէն

**ԱՐԱՐԱՏ ԱՇԱՐՈՆԵԱՆ ԵՒ ՎԻԳԵՆ ՏԻՇՉԻԲԵՆԵԱՆ**

Մասնակցութեամբ՝

**ՇԱՆԹ ՏԻՇՉԻԲԵՆԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԿԱՆՈՒՄԲԻՆ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 25 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ, «Քար էլ Սուֆար» ճաշարանին մէջ, Տրպայայա։

**ՃԱՇԿԵՐՈՅԹ — ՊԱՐԱՇԱՆԴԵՍ**

Կազմակերպութեամբ՝

**Շ. Ս. Ը. Ս. Ի ՊԱՍԵԹԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ**

Կովանորութեամբ՝

**Շ. Ս. Ը. Ս. Ի ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ**

Մասնակցութեամբ՝ սիրուած երգիչ՝

**ՇՐԱՉ ԿԱՅԾԱԿԵԱՆԻ**

Ընկերակցութեամբ՝

**ՍԵՐՈ ՊԱՐԱՍԱՐԵԱՆԻ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 18 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ, «Քար էլ Սուֆար» ճաշարանին մէջ, Տրպայայա։

**ՇԱՍԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԹԵՍԻ ՄԻԱԲՈՐԸ**

Կը ներկայացնէ

**«ՔՆԱՐ» ՊԱՐԱՆՈՒՄԲԻ ԵԼՈՅԹԵՐԸ**

Պարուսոյց՝

**ՖԵԼԻԹՍ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ**

Ուրբաթ 17, Շաբաթ 18, Կիրակի 19, Շաբաթ 25 եւ Կիրակի 26 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 8:30ին, Monnot սրահին մէջ, (Թապարիս)։

**BYBLOS BANK**

A BANK FOR LIFE

**ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ «ԱՂԲԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ ԱՆԹԻԼԻԱՍ**

**ԱՆԳԱՄԱԿԱՆ ԸՆԳՀԱՆՈՒԹ ԺՈՂՈՎ**

Տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 17 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 8:30ին, Աղբալեան ակումբի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ։

**ԿԱՐՉՈՒԹԻՆ**

**Շ. Ս. Ը. Ս. ԱՆԹԻԼԻԱՍ ՄԱՍՆԱԾԻՂ**

**ՍԿԱՌԵՍԱԿԱՆ ՀԱՒԱԲՈՅԹՆԵՐՈՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄ**

Շ. Ս. Ը. Ս. Անթիլիասի մասնաձեռնի սկաւտական խորհուրդն ու խմբապետական կազմը կը հրաւիրեն իրենց բոլոր սկաւտներն ու ծնողները, մասնաձեռնի սկաւտական հաւաքոյթի պաշտօնական բացման հանդիսութեան, Կիրակի, 19 Նոյեմբեր 2000, կէսօրէ ետք ժամը 5:00ին, Արգիտի նորակառոյց ակումբէն ներս։

**ՍԿԱՌԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՍԲԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ**

**ARA TRAVEL** IATA ԱՆՐԱՍ

**ARMENIAN AIRLINES՝ SALES AGENT,**

ՈՒՐԱՆՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅԱՅՏԵ ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ, ՈՐ Կ'ԱՊԱՇՏՈՎԵ

ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՎԱՆ - ՊԵՅՐՈՒԹ ԵՒ ՇԱԼԵՂ - ԵՐԵՎԱՆ - ՇԱԼԵՂ

**ARMENIAN AIRLINES ընկերութեան**

• օդանաւային տոմսեր • ավիաթի փոխադրութիւն

**ԱՐԱ ԹՐԱՎԵԼ,**

Պուրճ Կամուտ, Նամակատան շէք, Ըեռ. 266594 - 261298 : FAX: 261298

**ժՈՐԺ ԱՆԱՍ «Սաֆիր»**

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆ**

Առ տխար Սարգիս Գարամանուկեան։

Լիբանանի Հայոց Թեմի Գաղտնախոսական խորհուրդը իր 9 Նոյեմբեր 2000 թուականին կայացուցած Ա. Նիստին, որուն ներկայ չգտնուեցաւ, պահանջու էր ընտանեկան հարցով։

Այսու, ձեզ պաշտօնապէս կը հրաւիրենք Բ. Նիստի, որ տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 7 Դեկտեմբեր 2000, կէսօրէ ետք ժամը 1:00ին, պաշտպանելու համար ձեր դատը։

Կը թելադրենք, որ անպայման ներկայանաք Նիստին. հակառակ պարագային, ձեր բացակայութիւնը ներկայութեան համապատասխան վճիռ։

**ԴԱՍԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՅ**

**ՀՐԱՊԵՐԱԿԻ ՎՐԱՅ Ե ՎԻԳԵՆ ՏԻՇՉԻԲԵՆԵԱՆԻ ՆՈՐ ԶԱՅՆԵՐԻՉԸ՝ «ՊՈՒՐՃ ՇԱՍՈՒՏԵՆ ԿՈՒ ՉԱՍ»**

Ազգային եւ ժողովրդային երգեր

# Կնոջական

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

### Ի՞ՆՉՊԷՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՍԻՐՏԸ

ՈՐՈՇ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ՝  
ՄԻՆՉԵՒ 50 ՏԱՐԵԿԱՆ

Ձուարաններում կողմէ արտահոսում միջոցները (նորմանները)՝ Խօսքով և և փորձակներով, համեմատարար կը պաշտպանեն կինները սրտանոթային հիւանդութիւններէն եւ օսթւոքային միջոցներէն մեկնափոփող, որմէ հտք այլ արտահոսումները զգալիօրէն կը պակսին: Հետեւաբար պրեքտին վրայ արձանագրուած այս առաւելութիւնը ժամանակակարգ է. կու գայ ժամանակ մը, երբ կիններն ալ նոյնքան վտանգուած կ'ըլլան սրտանոթային հիւանդութիւններէն:

#### ՄՐՏԻՆ «ԳԱՀԻՃ»ՆԵՐԸ

- Սննդառութիւնը կենսական իւրերու եւ շաքարի չափազանցութիւնը կը նպաստեն քոլեստերոլին եւ բրիլիանտիտին բարձրացման:
- Ծխախոտը կը տկարացնէ երակները:
- Սրտը կը նպաստէ արեան բարձր ճնշումին:
- Նստակեաց կեանքը կը տկարացնէ սրտին մկանները:
- Ժառանգականութիւնը կրնայ մեծ դեր խաղալ քոլեստերոլի եւ բրիլիանտիտի բարձրացման մէջ:

#### ՀՈՐՄՈՆՆԵՐՈՒՆ ԳԵՐԸ

Սեռային միջոցները կ'ազդեն քոլեստերոլի սոկոսին վրայ: Խօսքով և և փորձակներով կը պակասեն զէշ քոլեստերոլին սոկոսը եւ կը բարձրացնեն լաւինը: Այս միջոցները նաեւ կ'ընդլայնեն երակները եւ առաջը կ'առնեն երակներու խցումին եւ ալ բարդութիւններու: Ահա թէ ինչո՞ւ մեկնափոփող թեւակոխող կիններուն կը թելադրուի միջոցային դարմանումի ենթարկուիլ, եթէ կ'ուզեն առաջը առնել սրտանոթային հիւանդութիւններուն եւ օսթւոքային:

#### ԻՆՔՉԻՆՔԻՆ ՀՈԳ ՏԱՆԻԼ

Վերոյիշեալ անպատեհութիւններուն առաջը առնելու համար ոչ մէկ բան կը փոխարինէ մարզանքը: ● Քալիֆուն բարձրները անհամար են, քալիֆուն կը զօրացնէ սրտին մկանները, կ'աշխուժացնենք արեան շրջապտուկները եւ կը կանոնաւորեն սրտին զարկերը: ● Միւս կողմէ, առողջ սննդառութիւնը մեծ դեր կը խաղայ: Պէտք է որդեգրել կենսական իւրերով եւ շա-



Քարով աղբատ սննդականոն մը, նախապատուութիւնը տալով պտուղին եւ բանջարեղէնին:

- Գիրութեան պարագային, պէտք է լրջօրէն մտածել նիհարնալու մասին:
- Մեկնափոփող շրջանին թելադրելի է հետեւիլ միջոցային դարմանումի, անշուշտ՝ ձեռք եւ բժիշկին համախոհութեամբ:

#### ԾՆԱՆՈՏԻՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Առողջ սիրտ մը ունենալու համար պէտք է ամէն բանէ առաջ ծխախոտը դադարեցնել: Իւրաքանչիւր 5 ծխախոտը սրտին 20 յաւելեալ զարկ կը պատճառէ մէկ վայրկեանի մէջ եւ միաժամանակ կը բարձրացնէ արեան ճնշումը: Ծխախոտը վտանգաւոր է նաեւ յղութեան շրջանին անկախ ժխտական ազդեցութիւն կ'ունենայ երակներուն վրայ եւ կը նուազեցնէ կազմաւորուող մանուկին սննդառութեան սոկոսը: Վերջապէս, շատ ծխող մայր մը ենթակայ է ծնելու մանրակազմ մանուկ մը եւ կանխահաս ծննդաբերութեան:

## ՇԵՏԱԵՐԵՐԱԿԱՆ

### ԱՆՏԱՐԸ ԵՒ ՆՈՐԱԶԵՒՈՒԹԻՒՆԸ

**Կըսուի, թէ այստարքի (զոտիակ) իւրաքանչիւր ճշան ունի իրեն համապատասխան ճաշակ եւ նորածնութիւնը կը դիտ ա՛յդ տեսանկիւնէն: Ահա թէ ի՞նչ կ'ըզ իւրաքանչիւր կենդանակերպ:**

Կարեւորութիւն չի տար, բայց շատ ուշադիր է իր մագրուելու յարգարանքին, գոյնին: Կոյսը կը խուսափի կարճ մագրուելու եւ կը նախընտրէ երկարը, որ աւելի իզական է: Ինչ կը վերաբերի շաքարին, ան շատ վարպետ չէ գոյներու ներդաշնակման մէջ:

**ԽՈՅԻՆ** ճաշակը դասական է, ան կը սիրէ դասական վայելչութիւնը եւ չի վարանիր մեծ գունդներ վճարելու իր սիրած կտորը գծելու համար: Խոյին գոյնը կրակի գոյնն է: Ան յաճախ չպար մը կը կրէ եւ կը վախճայ իր արտաքին տեսքը (մագի յարդարանք, մագի գոյն, կամ չպար) յաճախ փոխելու:

**ԿՈՒՐԸ** ոտքէն գլուխ վայելչութիւն կը ճառագայթէ: Ան շատ խստապահանջ ու դժուարահամ է եւ կ'ուզէ, որ մագին գոյնը, կրած *աքտուարներ* ու շաքար լիովին ներդաշնակուին իր հագուածքին: Կշիռքին գոյնը կանաչն է:

**ՑՈՒԼԻՆ** հագուստի պահարանը միշտ խոնդուած է, քանի որ ամէն բան կը պահէ: Ցուլը կը սիրէ բաց գոյները եւ հագուստներու ընտրութեան մէջ նախապատուութիւնը կու տայ պարզ ձեւերուն, բայց որակաւոր: Ցուլը շատ թեթեւ չպար մը կը կրէ եւ կը վախճայ իր արտաքին տեսքը (մագի յարդարանք, մագի գոյն, կամ չպար) յաճախ փոխելու:

**ԿԱՐԻՃ** ամեն առիթի հագուստ կը գնէ: Ան կը սիրէ ուշադրութիւն գրաւել եւ հմայել: Կարիճը կը խուսափի բաց գոյներէն եւ յատկապէս պաշտօնական առիթներուն նախապատուութիւնը կու տայ սեւ գոյնին: Կարիճին շաքար մեղմ է, իսկ մագին յարդարանքը դասական:

**ԵՐԿՈՒՐԵԱԿ** կը սիրէ ուշադրութիւն գրաւել եւ, հետեւաբար, կ'ընտրէ ինքնատիպ հագուստներ շատ անգամ շուրջները գայթակղեցնելու գնով: Երկուրեան կը չի վարանիր մէկ օրէն միւսը արտաքին տեսքը արմատական կերպով փոխելու: Ան կրնայ իր երկար մագերը կտրել եւ իզական կնոջ տիպարուն անցնիլ *սիորթի* կնոջ տիպարին: Երկուրեան կ'ընտրէ շաքարակազմ գոյնն է:

**ԱՂԵՂԱՒՈՐ** երկնագոյնը կը սիրէ: Ան նորածնութեան ստրուկը չէ եւ ոչ ալ տեղեակ է նորածնութեան վերջին լուրերէն: Ծաշակով առհասարակ դասական կը սիրէ սեւը եւ մութ գոյները: Աղեղնաւորը գրեթէ չի շաքարուի, բայց հոգ կը տանի մորթին եւ զանազան սերերով կը պաշտպանէ գայն:

**ԽԵՑԳԵՏԻՆ** կը հագնի իր անուսին կամ ընկերոջ ճաշակով, նոյնիսկ եթէ անոր ճաշակը չի համապատասխաներ իր մարմնին: Սակայն խեցգետինը ունի գոյները ներդաշնակելու յատուկ ոճ մը, իսկ նախապատուութիւնը արծաթագոյնն է: Ինչ կը վերաբերի շաքարին, ան օրուան բոլոր ժամերուն կը ճառագայթէ:

**ԱՅԵՂԻՐԻՆ** կը սիրէ «տաք» գոյները: Ան կը սիրէ հագնիլ, գարդարուիլ, շաքարիլ, բայց տեղին է առիթներով: Օրուան մէջ ան գործակալն է եւ նախապատուութիւնը կու տայ պարզ հագուածքին: Այծեղջիւրին շաքար մեղմ է եւ ճաշակաւոր:

**ԱՌԻԲ** ծիծիկն է ներ տաքատներու սիրահար է, նաեւ շատ կը սիրէ *աքտուարներ* կրել, բայց երբեք չի խնամեր մագրուելու շաքարը: Առիծը կը վախճայ ծերանալ եւ կ'ուզէ իր կրած *սիորթ* եւ պարզ հագուստով երիտասարդ երեւիլ: Այս պատճառով ալ առիծը հագուողներուն հագուստն է *թայտը* կը հագնի:

**ԾՈՎԱՆՈՅԸ** շատ ալ հետաքրքրուած չէ նորածնութեամբ, բայց միշտ ալ կրկնիկն է վայելուչ է: Ծովանոյշը կը սիրէ հոգի գոյնը, իսկ հագուստներու ընտրութեան մէջ նախապատուութիւնը կու տայ համզատաւտին եւ գործակալին:

**ԿՈՅԱ** նորածնութեան եւ հագուածքի

## ԳԵՂԵՅԱԿԻՏԱԿԱՆ

### Ի՞ՆՉՊԷՍ ԶԱՓԵԼ ԳԷՄՔԻՆ ՏԱՐԻՔԸ

Ծատեր իրենց տարիքէն աւելի մեծ, ոմանք ալ ընդհակառակը, աւելի պոստիկ կ'երեւին: Այս բոլորը կը դատեն մեր դէմքին գիծերէն եւ մորթին տեսակէն: Կ'ուզէ՞ք չափել ձեր դէմքին տարիքը... Ահա աւստիկ ձեւը:



Ճշգրիտ, բայց ոչ՝ շատ խստապահանջ:

- Յօնքերուն միջեւ կնճիռ +3
- Աչքերուն տակ կնճիռ +4
- Վերին կողմերու թուլացում +4
- Աչքերուն տակ «ծրարիկներ» +4
- Աչքերուն շուրջ կնճիռ +4
- Զիթն կողմերուն կնճիռներ +3
- Դէմքին վրայ մութ գոյնի արատներ +5
- Շուրթերուն շուրջ կնճիռներ +5
- Շուրթերուն վրայ փոքր կնճիռներ +4
- Կրկնակի կզակ +4
- Վիզի կնճիռ +5

«ԱԶԴԱԿ»Ի ՀԵՌԱՋԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԴԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

## ՍՆՆԴՍԳԻՏԱԿԱՆ

### ՆԻՀԱՐՑՆՈՂ ԱՊՈՒՐԸ

Ամբերիկայի եւ Եւրոպայի մէջ կինները միմիայն այդ հրաշք ապուրին մասին կը խօսին եւ բերնէ բերան կը փոխանցեն անոր խոհագիրը: Այո՛, խօսքը բանջարեղէնի նշանաւոր ապուրին մասին է, որ 7 օրուան ընթացքին 3 - 5 քիլօ կորսնցնել կու տայ ձեր ծանրութեան, առանց ուժասպառ ընելու կամ առանց անօթութեան եւ զրկանքի զգացում ստեղծելու:

Բանջարեղէնի ապուրին սննդականոնը յղացած են ամերիկացի բժիշկներ, որոնք իրենց սոնք (օսլիզ) յաճախողներուն կը պարտադրէին քանի մը քիլօ կորսնցնել նախքան վիրաբուժական գործողութեան մը ենթարկուիլը: Այս ապուրին եւ սննդականոնին գտած յաջողութեան քաջալերուած՝ միլիոնաւոր կիններ կը կիրարկեն գայն...

Բայց այն, ինչ որ կը յարմարի սոնքերուն, անպայմանօրէն չի յարմարիլ սովորական դէրերուն: Հետեւաբար, եթէ մտադիր էք կիրարկել գայն, պէտք է գործադրէք մասնագէտներու խորհուրդները՝ ճիշդ եւ առողջ ձեւով նիհարնալու համար:

#### ԱՊՈՒՐԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԸ.

- 3 լիթր ապուրի համար պէտք ունիք.
  - ◆ 4 պճեղ սխտորի
  - ◆ 2 լուրիկի
  - ◆ 4 պրասի
  - ◆ Պոստիկ կաղամբի մը
  - ◆ 2 սոյսի
  - ◆ 2 սմբուկի
  - ◆ 2 ճիւղ կարոսի
  - ◆ 1 ցօղուն ազատեղի
  - ◆ 1 ցօղուն ծոթրիճի
  - ◆ 2 պղպեղի
  - ◆ 3 ծնեփեկի
  - ◆ 3 լիթր ջուրի
  - ◆ Դափնիի 3 տերեւի
  - ◆ Սեւ, փոշի պղպեղի
  - ◆ Պտղուց մը աղի

#### ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԸ.

Միտորը ճղմել եւ սոխերը խոշոր մանրել: Բոլոր բանջարեղէնները չափաւոր մեծութեամբ կտրուել: Բոլորը միատեղ զնել կաթսայի մը մէջ, աւելցնել 3 լիթր ջուրը, աղել, համեմել, աւելցնել թարմ ծոթրիճը, զափնիի տերեւը եւ շուրջ մէկ ժամ եփել: Եփի վերջաւորութեան հանել ծոթրիճն ու զափնիի տերեւները, բանջարեղէններուն վրայ աւելցնել մանրուած ազատեղի: **ՈՒՇԱՐՈՒԹԻՒՆ.** այս ապուրը միքսըրէ պէտք չէ անցնել: ալյապէս ան իր առաւելութիւններուն մէջ կարեւոր մասը կը

#### ՄԱՍՆԱԳԵՆԵՐՈՒ ԿԱՐԾԵՆԵՐԵՆ...

Որպէսզի 7 օրուան ընթացքին 3 - 5 քիլօ կորսնցնենք, պէտք է որ այս սննդականոնը կիրարկենք լրիւ 7 օր: Այս 7 օրուան ընթացքին պէտք է հիմունիլ 4 լիտր սկզբունքներու վրայ:

**ԱՌԱՋԻՆ.** Այս ապուրին պէտք է ուտել օրական առնուազն 3 անգամ, բայց նաեւ՝ երբ որ անօթի զգանք:

**ԵՐԿՐՈՐԴ.** Այս սննդ. կանոնի ընթացքին, մեր մարմնին պէտք է հայտնաթել անհրաժեշտ բնասպիւր (կարմիր միւս, ձուկ, կաթնեղէն...) պահպանելու համար մեր մկանները:

**ԵՐՐՈՐԴ.** Թելադրելի է սննդականոնին ընթացքին մարմնին հայտնաթել միւսի վիթամին մը՝ Ա, ՊԷ, ՍԷ, ՏԷ եւ Էօ կենսանիւթներով հարուստ: **ԶՈՐՐՈՐԴ.** Նիհարնալի ետք պէտք է քիչ-քիչ աւելցնել ուտելիքներուն քանակը կորսնցուցած քիւնները կրկին վրայ չընելու համար:

**ՑՈՐՈՒԱՆ ՍՆՆԴԱԿԱՆՈՆ ՄԸ**

Նոյն այս հրաշք ապուրով կարելի է հետեւիլ ութօրեայ սննդականոնի մը եւ կորսնցնել 4 քիլօ:

**ԱՌԱՋԻՆ ՕՐ.** Կարելի է ուտել այս ապուրին եւ ալյապան պտուղներ, երբ որ անօթեանք եւ որքան որ ուզէք:

**ԵՐԿՐՈՐԴ ՕՐ.** Կրկին ապուր, բայց պտուղը կը փոխարինուի եփած կամ հում բանջարեղէններով, բայց՝ եղիպացորենէն, ոլոռնէն, ճերմակ լուրիայէն...

**ԵՐՐՈՐԴ ՕՐ.** Դարձեալ ապուր, առաւել պտուղ եւ բանջարեղէն, առանց գետնախնձորի, շաքարի եւ կարագի:

**ԶՈՐՐՈՐԴ ՕՐ.** Կրկին ապուր, առաւել բանջարեղէն, իսկ միակ արտօնուած պտուղը պանանն է (կարելի է ուտել մինչեւ... 8 հատ):

**ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ.** Կրկին ապուր, առաւել 300 կրամ կովու միս եւ 6 լիտր:

**ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ.** Հինգերորդ օրուան ճա-



չացուցակը: **ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐ.** Առնուազն մէկ ժամ ապուր, առաւել չէ 4 լիտր կանաչեղէն, թարմ պտուղի հիւթ: **ՈՒԹՆԵՐՈՐԴ ՕՐ.** Առաջին օրուան ճաշացուցակը, բացի պանաննէն:

#### ԶՈՐԻ, ԴԱՐՁԵԱԼ ԶՈՐԻ

Եթէ ապուր կ'ուտենք, ասիկա չի նշանակեր, որ մեր մարմինը անհրաժեշտ հեղուկը կը ստանայ եւ պէտք է զարդիք ջուր խմել: Ժաշի ժուճերուն միջեւ յանձնարարելի է



խմել ջուր, կանաչ թէյ կամ ալ խոտերու հիւթեր:

Տեսարար լինենք, որ օրուան ընթացքին կէսէն մէկ լիթր ջուր կը կորսնցնենք միայն քրտինքի ճամբով:


Մանրականոնին ընթացքին նախապատուութիւնը տալ հանքայիններով հարուստ ջուրերուն:

Վերջապէս, լինցնենք, որ սննդականոնին ընթացքին պէտք է հրաժարիլ ալբոլ պարուրեալ խմիչքներէն:

#### Պատրաստելու ճՈՒՇԻՎ ՄԱԿԻՍԱԳԱՆԵԱՆ



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Կ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ ՎԱՐԸ ԿՈՒ ՏԱՅ ԿԱՐԵՒՈՐ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ ՍԸ

Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնը երկ հաղորդեց, որ վաղը՝ Ուրբաթ, 17 Նոյեմբերին մամուլի ասուլիսի մը ընթացքին պիտի յայտարարեի, թե վերջնական իհնչ վախճան պիտի ունենայ չորս ակումբներուն պոթքթի հարցը:

Պոթքթի դիմած չորս ակումբներն ամենն ակնի «տուժեց» Չուարթնոց ՀԱՌԻ խումբը, որուն մարզիչն է Խորեն Յովհաննիսյան: Անիկա դուրս դրուեցաւ արտուրեանութենէն, մինչ մնացեալ երեք կազմերը՝ Արարատ Երևան, Մլխա Աշտարակ եւ Տինասո Երևան երեքն ալ 3-0 արդիւնքով պարտուած հոշակուեցան, որովհետեւ իրենց մրցակիցներուն դէմ դաշտ չէին ներկայացած:

Նշենք, թե Չուարթնոցի պատիժը ակնի ծանր եղաւ, որովհետեւ անիկա այս եղանակին երկրորդ անգամ ըլլալով էր, որ դաշտ չէր ներկայանար:

Այդ ակումբներուն պոթքթին օգտուող միակ կազմը եղաւ Արարատ, որ 3-0 արդիւնքով յաղթական դուրս եկաւ, որովհետեւ Չուարթնոց դաշտ չէր ներկայացած:

Արարատ ինկզ կէտի առաւելութիւն ունի Արարատի վրայ, մինչ պիտի անութեան աւարտին մնացած է միայն մէկ հանգրուան: Արարատ, որ իր կատարած 27 մրցումներէն հաւաքած է 58 կէտ, այսօր իսկ կրնայ հանդիսանալ արտուրեան (առաջին անգամ ըլլալով), եթէ վերջին դիրքը «գրառող» Տինասոյի դէմ պարտութիւն չկրէ: Անցեալ եղանակի արտուրեան Շիրակ 55 կէտով կը գրաւէ, 2րդ դիրքը:

## Հ. Մ. Ը. Մ. – ՍԱԼԱՄ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Շաբաթ, 18 Նոյեմբերին, Պորձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի պիտի ունենայ ֆուտպոլի բարեկամական մրցում մը՝ Հ. Մ. Ը. Մ. ներկայացուցչական կազմին եւ Սալամ Չղարթոյի միջեւ, կէսօրէ ետք ժամը 3:00ին:

Այս մրցումը Հ. Մ. Ը. Մ. ի տղոց համար պիտի ըլլայ երրորդը՝ Այնճարէն վերադարձին, հայրանին մէջ 15 օրուան մարզական բանակումին, տղաքը բաւական պատրաստուած էին տր եղանակին:

Փորձ մրցումներուն առաջինին՝ Անա Ալի Ալէյի դէմ, Հ. Մ. Ը. Մ. 2-1 արդիւնքով պարտուած էր, իսկ երկրորդին՝ 2-1 արդիւնքով պարտութեան մատնած էր Ալի Սալամը:

● Հ. Մ. Ը. Մ. ի համակիրներու յանձնարարութիւնն նախաձեռնութեամբ, յառաջիկայ Երկուշաբթի, 20 Նոյեմբեր, երեկոյեան ժամը 7:30ին, Մարդարապատ ակումբին մէջ տեղի պիտի ունենայ հանդիպում-վրայ մը՝ ֆուտպոլի յանձնարարութիւնն հետ, որ ուղղակիօրէն պիտի ձայնասփռուի «Հանայ Չայն»-էն:

## ՖԻՖԱԻ ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

### ՃԱՓՈՆ Կ'ԱՐՇԱԻԷ

ՖԻՖԱԻ կողմէ երկ հրապարակուած ֆուտպոլի աշխարհի ընդհանուր դասաւորման մէջ մեծագոյն ուսումնարանագրող կազմը եղաւ Անա - 2000ի արտուրեան ձափուն, որ 49րդ դիրքէն բարձրացաւ 34րդ դիրք: Իր կարգին, Սեուուական Արարատ ուսումնարանագրողներուն կարգին եղաւ եւ 46րդ դիրքէն բարձրացաւ 35րդ դիրք:

Ընդհանուր դասաւորման վերին չորս դիրքերը փոփոխութիւն չկրէցին:

Սկովտիա առաջին քանին մէջ դիրք մը ապահովեց եւ 25րդ դիրքէն բարձրացաւ 20րդ դիրք:

Յունաստան եղաւ մեծագոյն նահանջ արձանագրող կազմը, երբ 32րդ դիրքէն նահանջեց 42րդ դիրք:

Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբը երեք դիրք նահանջեց եւ այժմ կը գրաւէ 90րդ դիրքը: Իր կարգին երեք դիրք նահանջեց Սուրիա (այժմ՝ 101րդ), մինչ Լիբանան մէկ դիրք բարձրանալով, այժմ կը գրաւէ 110րդ դիրքը:

Ստորեւ՝ առաջին քսան երկիրներուն դասաւորումը, ինչպէս նաեւ կարգ մը կարեւորագոյն երկիրներուն դասաւորումը (փակագծի մէջ նշուած են անոնց անցեալ ամսուան դասաւորումը).

	ԿԵՏ
1. Պրագիլ (առաջին)	818
2. Ֆրանսա (2րդ)	801
3. Արժանթին (3րդ)	762
4. Չեխիա (4րդ)	748
5. Իտալիա (6րդ)	746
6. Սպանիա (5րդ)	742
7. Փորթուգալ (7րդ)	740
8. Գերմանիա (8րդ)	715
9. Եուկրաինա (10րդ)	712
10. Հոլանտա (9րդ)	711
11. Մեքսիքա (11րդ)	696
12. Փարակուէյ (14րդ)	694
13. Ռումանիա (13րդ)	685
14. Նորվեգիա (12րդ)	684
15. Քոլումբիա (16րդ)	674
16. Անգլիա (15րդ)	667
16. Խրուաթիա (17րդ)	667
18. Միացեալ Նահանգներ (18րդ)	648
19. Չիլի (19րդ)	642
20. Սկովտիա (25րդ)	637
21. Ռուսիա (23րդ)	636
22. Շուէտ (21րդ)	632
23. Հարաւային Աֆրիկէ (22րդ)	631
24. Գանիա (20րդ)	626
-----	
32. Եգիպտոս (31րդ)	589
33. Ալի (38րդ)	588
34. Ճափոն (49րդ)	587
35. Սէուտական Արաբիա (46րդ)	586
-----	
80. Իրաք (89րդ)	469
-----	
90. Հայաստան (87րդ)	440
-----	
101. Սուրիա (98րդ)	412
-----	
110. Լիբանան (111րդ )	382

ՊԱՍԵԹՊՈԼ. ԷՆ. ՊԻ. ԷՅ.

## ԸՈՔՍ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Էն. Պի. Էյի երկուան մրցումներուն Աթլանթա Հոքս ի վերջոյ յաջողեցաւ եղանակի իր առաջին յաղթանակը արձանագրել, յաջողական իր կրած եօթը պարտութիւններէն ետք: Հոքս յաջողեցաւ 99-97 արդիւնքով պարտութեան մատնել Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրը, շնորհիւ ձեռքը թերի նշանակեց վերջին կէտին: Մինչ արդիւնքը կ'ընթացար 97-97, Թերի նշանակեց իր կազմին համար «արժեքաւոր» երկու կէտերը, ասարտն 9 երկվայրկեան առաջ միայն:

Սան Անթոնիո Սփրըզ շարունակեց իր դաշտին վրայ մնալ անպարտելի, 86-79 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Եուրթա ձեռքը, որ այսպիսով կրէց եղանակի իր 2րդ պարտութիւնը:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Սփրըզ հետպիտէ կը գտնէ երբեմնի իր բաւական լախադարկութիւնը, նկատի ունենալով, որ առաջին չորս վայրկեաններուն արդէն իսկ 19 կէտի առաւելութիւն մը ունէր ձեռք վրայ:

Յարդ միայն մէկ յաղթանակ արձանագրած Շիքսօ Պուլզ շարունակեց ձախող արդիւնքներ արձանագրել, կրելով եղանակի իր 6րդ պարտութիւնը. անիկա տեղի տուաւ Հիուսթըն Ռոքեթցի դաշտին վրայ, 110-83 արդիւնքով:

Լոս Անճելըսի մէջ, Լէյքըրզ 119-103 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը Տենվըր Նակեթցը: Քէյքըրզի սասորդ-դէպս

Շաքիլ Օսիլ, որ նշանակեց 34 կէտ եւ «հաւաքեց» 19 ռիպաուտ, իսկ անոր խմբակից Քոպէ Պրայընթ նշանակեց 31 կէտ եւ կատարեց 9 էսիսթ:

Սաքրամենթո Քինկզ արձանագրեց յաջորդական իր 5րդ յաղթանակը, 96-82 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Օրլանտո Մէճիքը: Քինկզի մարզիկ Փէյա Սթոյաքովիչ նշանակեց 27 կէտ եւ «հաւաքեց» 11 ռիպաուտ:


## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՍԻ ...

### Շարունակուած Ա. Էջէն

դատապարտումը, իբրեւ կենսական քայլ մը ամբողջ մարդկութեան դէմ գործարկուած այս ոճիրը Թուրքիոյ կառավարութեան կողմէ հերքումիւն մէջ մեր կառավարութեան մեղաւկցութեան վերջ դնելու ուղղութեամբ, յայտնեց Ամերիկայի Հայ Դատի Յանձնարարութիւնը գործադիր տնօրէն Արամ Համբարեան:

«Սկզբունքային այս կեցումը կ'ամրապնդէ հայ ժողովուրդին եւ կաթողիկէներու միջեւ հոգեկան եւ բարեկամական կապերը», ըսաւ ան: Թրքական «Մապահ» թերթը կը հաղորդէ, որ Անգարայի մէջ վատիկանի դեսպանատան գործակատարը կանչուած է արտաքին գործոց նախարարութիւն. Պապին եւ Գարեգին Բ. կաթողիկոսին կողմէ Հայկական Յեղասպանութեան մասին հրապարակուած միացեալ յայտարարութեան առիթով:

Նախարարութեան երրօրեայ բաժանումը ընդհանուր տնօրէնը դիւանագետին ըսած է, որ բազմաթիւ թուրքեր իրենց կեանքը կորսնցրուցած են հայերու վերաբնակեցման ընթացքին: Ան նշած է, որ Պապը կրօնական խորականութիւն ըրած է:



Աթլանթա Հոքսի մարզիկ ձեռքը Թերի կը նշանակէ իր կազմին յաղթանակի կողովը:

Ստորեւ՝ երկուան մրցումներուն արդիւնքները.

Աթլանթա Հոքս - Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ 99-97	Քիլվինտ Քավալիրզ - Կոլտըն Սթէյթ Ուորիըրզ 96-86	Մայնի Հիթ - Շարլոթ Հոռնէթց 89-86	Սաքրամենթո Քինկզ - Օրլանտո Մէճիք 96-82	Հիուսթըն Ռոքեթց - Շիքսօ Պուլզ 110-83	Սան Անթոնիո Սփրըզ - Եուրթա ձեռք 86-79	Սիէթլ Սուփըրսոնիքս - Նի Եորք Նիքս 96-75	Լոս Անճելըս Լէյքըրզ - Տենվըր Նակեթց 119-103
Ստորեւ՝ դասաւորումը.							

### ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ

#### ԱՏԼԱՆՏԵԱՆ ԳՕՏԻ

	Յաղթ.	Պարտ.
1. Ֆիլատելֆիա Սիքսըրզ	7	0
2. Նի Եորք Նիքս	5	3
3. Մայնի Հիթ	4	3
4. Օրլանտո Մէճիք	4	5
5. Նի ձըրպի Նէթց	3	4
6. Պոսթըն Սէլթիքս	2	4
7. Ուաշինկթըն Ուիլչարտ	2	6

#### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ

1. Քիլվինտ Քավալիրզ	6	1
2. Ինտիանա Փէյքըրզ	4	2
3. Թորոնթո Ռեփթըրզ	4	3
4. Շարլոթ Հոռնէթց	4	4
5. Տիքսոնիք Փիւքըրզ	3	5
6. Միլուոքի Պաքս	1	5
7. Շիքսօ Պուլզ	1	6
8. Աթլանթա Հոքս	1	7

### ԱՐԵՄՏԵԱՆ ՇՐՋԱՆ

#### ՄԻՋԱՐԵՒՄՏԵԱՆ ԳՕՏԻ

1. Սան Անթոնիո Սփրըզ	6	2
2. Եուրթա ձեռք	5	2
3. Տայաս Մավըրիքս	5	3
4. Վանքուվըր Կրիվիչ	4	3
5. Հիուսթըն Ռոքեթց	4	5
6. Միլուոքս Վուլվզ	3	4
7. Տենվըր Նակեթց	3	5

#### ԽԱՂԱՂԱԿԱՆ ԳՕՏԻ

1. Ֆէօնիքս Սանկ	6	1
2. Սաքրամենթո Քինկզ	7	2
3. Լոս Անճելըս Լէյքըրզ	5	3
4. Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ	5	4
5. Սիէթլ Սուփըրսոնիքս	3	6
6. Լոս Անճելըս Քիլվըրզ	2	6
7. Կոլտըն Սթէյթ Ուորիըրզ	1	6

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.

Ուաշինկթըն Ուիլչարտ - Պոսթըն Սէլթիքս Քիլվինտ Քավալիրզ - Ֆիլատելֆիա Սիքսըրզ Ինտիանա Փէյքըրզ - Տիքսոնիք Փիւքըրզ Աթլանթա Հոքս - Միլուոքի Պաքս Կոլտըն Սթէյթ Ուորիըրզ - Միլուոքս Վուլվզ Մայնի Հիթ - Նի ձըրպի Նէթց Տայաս Մավըրիքս - Ֆէօնիքս Սանկ Նի Եորք Նիքս - Լոս Անճելըս Քիլվըրզ

## ՖՐԱՆՍԱ ՊՈԼՍՈՅ ՄԵՋ 4-0 ԱՐԴԻԵՆՔՈՎ ԶԱԽՉԱԽԵՑ ԹՈՒՐԵԻԱՆ

Երէկ, Պոլսոյ մէջ, աշխարհի ախոյեան Ֆրանսայի ազգային խումբը բարեկամական մրցումի մը ընթացքին 4-0 արդիւնքով ջախջախեց Թուրքիան:

Մրցումը ընթացաւ ամբողջութեամբ ֆրանսական տիրապետութեան տակ: Տակաւին ֆրանսացիք դաշտ ներկայացան բազմաթիւ պահեստի, ինչպէս նաեւ նորեկ մարզիկներով: Մրցումին վերջին 20 վայրկեաններուն կարելի է ըսել, որ Եւրոպայի ախոյեանը ֆուտպոլի լաւ դաս մը տուաւ թուրքերուն, որոնք անձրկած մնացին ֆրանսական գերակայութեան դիմաց:

Ֆրանսայի կոլեքը նշանակեցին Տաիտ Թրեյկէ, Սիլվէն Վիլթորտ, Եոհան Միքո եւ Լօրան Ռոպէր:

### ԱՅԼ ԸՆԴԴԻՊՈՒՄՆԵՐ

Երէկ, Եւրոպայի մէջ տեղի ունեցան բարեկամական բազմաթիւ այլ մրցումներ էս:

Անգլիա 1-0 արդիւնքով տեղի տուա Իտալիոյ դիմաց, Թորինոյի մէջ: Մրցումին «որ» կոլը նշանակեց Կենարօ Կաթուօ (58րդ):

Մրցումէն առաջ մարզիկները եւ համակիրները մէկ վայրկեան լուրջութեամբ յարգեցին յիշատակը «Տիպ» ընկերութեան սեփականատէր ընտանիքին մէկ անդամին՝ 47 տարեկան Ճիանի Անիէլլիի յիշատակը. ան երէկ սպաննուած գտնուած էր:

Իր կարգին, Գերմանիա պարտութիւն մը կրէց Դանիայէն, 2-1 արդիւնքով, Քոփենհագընի մէջ: Տենիս Ռոմէտայ նշանակեց Դանիոյ կոլեքը (56րդ եւ 66րդ), իսկ Մեհմէթ Շոյ՝ Գերմանիոյ կոլը (81րդ):

Ստորեւ՝ երկուան բարեկամական մրցումներուն արդիւնքները.

Էսթոնիա - Խըրխըրչիստան	1-0
Ալպանիա - Մալթա	3-0
Դանիա - Գերմանիա	2-1
Յունաստան - Սլովաքիա	0-2
Ալիք - Ֆինլանտա	3-0
Իտալիա - Անգլիա	1-0
Մակեդոնիա - Հունգարիա (յետաձգուած)	1-0
Լեհաստան - Իսրայէլ	1-0
Փորթուգալ - Իսրայէլ	2-1
Ռումանիա - Եուկրաինա	2-1
Սկովտիա - Աւստրալիա	0-2
Սպանիա - Հոլանտա	1-2
Թունիզ - Չեխիքիա	1-1
Թուրքիա - Ֆրանսա	0-4

### «ՎԱՅՍՐՈՅ» ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱԸԱՐԸ

## ԱՅՍՕՐ՝ ՆԸԺՄԷ - ԱՆՍԱՐ ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄ

Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնը շաբաթակիցը իր գումարած հերթական ժողովին վաւերացնելէ ետք «Վայսրո» բաժակի ֆուտպոլի մրցաշարքի Ա. հանգրուանի մրցումներուն արդիւնքները, հրապարակեց կիսաարտական հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

Նախքան իր ժողովին սկսիլը, ֆետերասիոնի անդամները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին միջազգային նախկին իրաւարար Օմար Մուսաֆայի յիշատակը (ան մահացած էր քաղցեղի պատճառով), բարձր գնահատելով անոր անկողնական կայութիւնը՝ իբրանաեան դաշտերուն վրայ տեղի ունեցած մրցումներուն:

Ստորեւ՝ «Վայսրո» բաժակի կիսաարտական հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

### ԱՅՍՕՐ

Անսար - Նըժմէ ժամը 6:00ին (Պէյրութի Քաղաքապետարանի դաշտ)

### ՎԱՐԸ

Թատանոն Սուր - Անա Ալի Ալէյ ժամը 6:00ին (Պէյրութի Քաղաքապետարանի դաշտ)

### 2002Ի ՄՈՆՏԻԱԼԻ ԶՏՈՒՄԻ ՄՐՅԱԸԱՐԸ

## ՊՐԱՋԻԼ - Ը

